

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՆԳԼԵՐԵՆ

ԹԵՄԱ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Կազմեց՝ Անի Արմենի Ստեփանյան

Նորաշենիկի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Թագուհի Ղոնյան

«Կապանի N°2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն	2
Ներածություն	3
Գլուխ 1.1-Կրթությունը արդի տեխնոլոգիաների ժամանակաշրջանում	5
Գլուխ 1.2-Հեռավար ուսուցումը և դրա առանձնահատկությունները	7
Գլուխ 1.3 - Հեռավար ուսուցման խոչնդոտներ	9
Գլուխ 2.1.Հեռավար տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում	10
Գլուխ 2.1. Հեռավար և ավանդական ուսուցման ձևերի համեմատական վերլուծություն	13
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը անգլերենի դասավանդման գործընթացում	14
ESL LESSON PLAN TEMPLATE	18
Եզրակացություններ	22
Առաջարկություն	23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մարդկությունն ապրում է համակարգչային տեխնոլոգիաների դարաշրջանում: Պատմության մեջ մարդկության զարգացման փոփոխությունների ամենահզոր ուժն ու խթանը հանդիսացել են տեխնոլոգիաները: Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունն սերտորեն առնչված է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) տարածումը անհրաժեշտ ու հրատապ է դարձնում աշխատողների կողմից համապատասխան գիտելիքների ու հմտությունների յուրացման հարցը: Կրթության և ՏՀՏ-ի փոխհարաբերության մյուս կողմը հենց կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով կրթության համակարգի արդիականացումը, ուսուցման և ուսումնառության արդյունավետության մեծացումն է: Զարգացած երկրներում, որոնցից է նաև Հայաստանի Հանրապետությունը, մարդկությունը և հատկապես՝ նոր սերունդը՝ երեխաները, ապրում են էլեկտրոնային մշակույթի դարում: Վերջին ժամանակաշրջանում, պայմանավորված համաճարակի համավարակով, Հանրապետության գրեթե բոլոր դպրոցներում ներդրվեցին հեռավար ուսուցման եղանակը, ինչն էլ ուսումնական հաստատություններում շարունակաբար բարելավվում է, մշակվում են հեռավար ուսուցումն ավելի օպտիմալ կազմակերպելու պրոցեսը: Կրթական համակարգի համար անցումային այս փուլը շատ հետաքրքիր է նրանով, որ այն տեսանելի է դարձրել այնպիսի հիմնական խնդիրներ, որոնք տարիներ շարունակ եղել են կրթության ոլորտում. կրթական մեթոդների, հմտությունների զարգացումը, ուսուցչի դերի և նշանակության բարձրացումը, դասագրքերի բովանդակային արդիականացումը նմանատիպ իրավիճակում է՛լ ավելի հրատապ լուծման խնդիրներ են դառնում: Այժմ դժվար է պատկերացնել կրթական համակարգ՝ դպրոց, առանց համակարգչի: Ավելին՝ տարրական դպրոցում անհնար է դասավանդել առանց հասանելի և մատչելի տեսանյութերի, որոնց մատուցման, վերարտադրման հիմնական գործիքներից է համակարգիչը, համացանցը: Այսպիսով՝ ուսուցման ավանդական համակարգում ավելանում է ուսուցման մի նոր մեխանիզմն, որն է՝ համակարգչային ուսուցումը: Նշվածով պայմանավորված անհրաժեշտություն է դառնում ուսուցչի կողմից ժամանակակից կրթական հմտություններին տիրապետելը, այսինքն՝ լինի մեղիագրագետ: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով նյութի մատուցումն ավելի մատչելի և գրավիչ է դարձնում այդ նյութը, ինչն էլ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն:

Հետազոտության նպատակը: - Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել, կրթական համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, գնահատել դրանց դերն ու առաջնահերթությունը հեռավար և առկա դասերի ընթացքում, անդրադռնալ հեռավար ուսուցման խոչնդոտներին:

Հետազոտության խնդիրները: - Նպատակին հասնելու համար հարկավոր է առաջադրել հետևյալ խնդիրները.

- . Ուսումնասիրել թեմային առնչվող գրականություն, այլ աղբյուրներ:
- . Պարզաբանել Տեղեկատվական տեխնոլոգիաներ, հեռավար ուսուցում հասկացությունները:
- . Կատարել հեռավար և ավանդական ուսուցման ձևերի համեմատական վերլուծություն:
- . Հիմնավորել անգլերեն դասի ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը:
- . Կատարել հարցումներ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ:
- . Կատարել եզրահանգում:

Գլուխ 1.1 Կրթությունը արդի տեխնոլոգիաների ժամանակաշրջանում

Անհատները, կազմակերպությունները, հասարակությունը կարիք ունեն օգտագործել տարաբնույթ համակարգեր՝ տեղեկատվություն հավաքագրելու, մշակելու, պահպանելու, վերհանելու և հաղորդելու նպատակով: Այդպիսի համակարգերը կոչվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Տեղեկատվական համակարգերը տվյալների, տեղեկատվական տեխնոլոգիաների, մշակման ընթացակարգերի և այն մարդկանց միավորումն են, որոնք հավաքագրում, մշակում, օգտագործում և պահպանում են այդ տվյալները (Gordon S. R., Gordon J. G., Information Systems, a Management Approach, New York 1996, p. 6-7):

Անհատի համար տեղեկատվական համակարգի անհրաժեշտությունը բաժանվում է երկու մասի, առաջին՝ տեղեկատվական համակարգ, որի գոյությունը պայմանավորված է անհատի աշխատանքային գործունեությամբ, և երկրորդ՝ անհատի անձնական տեղեկատվության պահպանմամբ և կիրառմամբ:

Մենք ապրում ենք մի դարաշրջանում, երբ տեխնոլոգիան ինքնին հաճախ ներառում է տեխնոլոգիական լուծումների գործնական կիրառում ծրագրային ապահովման մշակման մեջ՝ ուսուցմանը, ուսմանը և մարտահրավերներին՝ ստեղծագործական հետազոտության մեջ: Կրթության համար նոր տեխնոլոգիական գործիքները գրավիչ և բովանդակալից ձևերով օգտագործելու համար անհրաժեշտ է հասկանալ կրթական միջավայրում տեխնոլոգիաների ընդունման միտումները:

Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը, շատ մեծ հեռանկարներ բացելով մարդկության համար, միաժամանակ առաջադրում է բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումից է կախված ինչպես հասարակության յուրաքանչյուր անդամի ճակատագիրը և պետության զարգացման ուղղությունները, այնպես էլ, ընդհանուր առմամբ, ամբողջ հասարակության գոյատևումը: Ժամանակակից հասարակությունը դառնում է գլոբալ տեղեկատվական հասարակություն, որը գիտելիքների և տեղեկատվության վրա հիմնված ինտելեկտուալ հասարակություն է: Այդպիսի հասարակության հիմնական կապիտալը մարդկային կապիտալն է: Այդ իմաստով անհրաժեշտություն է դառնում յուրաքանչյուր մարդու կրթությունը և ներգրավումը տեղեկատվական հասարակության մեջ: Այս գործում մեծ է հեռավար ուսուցման դերը: (Կրթության տեխնոլոգիայի միտումները ժամանակակից հասարակության համար, <https://elearningindustry.com/trends-in-education-technology-modern-society>):

Աշխատանքային և սոցիալական միջավայրերի, դրանցում գործաձվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման: Բայց սա ճիշտ է ոչ միայն մարդկանց, այլև կազմակերպությունների, ինչպես նաև ամբողջ հասարակության վերաբերյալ, քանի որ հասարակության կրթական մակարդակը և

սովորելու կարողությունները սկզբունքային նշանակություն են ստանում երկրի զարգացման եւ միջազգային տնտեսական մրցունակության համար:

Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Կրթության և ՏՀՏ-ի փոխհարաբերության մյուս կողմը հենց կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով կրթության համակարգի արդիականացումը, ուսուցման և ուսումնառության արդյունավետության մեծացումն է:

Այսօրվա ուսուցիչը պետք է հասկանա ՏՀՏ կիրառության առավելությունները և զգա,թե որքանով է այն հեշտացնում թե՛ իր աշխատանքը թե՛աշակերտների՝դարձնելով դասն առավել մատչելի,հետաքրքիր,կիրառական և աշակերտակենտրոն:

ՏՀՏ-ի գործառությամբ հնարավոր է ավելի հարուստ,բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել,դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ:Արդյունքում աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է,այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը:Սա երեխայի մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում. դասարանում,շրջապատում կա մի բան ,որ կախված է իրենից:

Ժամանակակից կրթական համակարգին ներկայացվող պահանջներն ընդհանուր առմամբ կարելի է ձևակերպել այսպես.

1) խնդրահարույց իրավիճակին ստեղծագործական մոտեցում ցուցաբերող, արդիական խնդիրների լուծման համար ոչ միայն արդեն հայտնի ձևեր և մեթոդներ կիրառող, այլև նոր մոտեցումներ ու լուծումներ գտնող մասնագետների ձևավորման պահանջ,

2) ապագա մասնագետի անձնական և բարոյական որակների՝ պատասխանատվության, հանդուրժողականության, հաղորդակցվելու կարողության, կոլեկտիվում աշխատելու ունակության ձևավորման պահանջ,

3) նախնական տվյալներն ինքնուրույն որոնելու և մշակելու, դրանք տեղեկատվության և գիտելիքների փոխակերպելու կարողության ձևավորման պահանջ: (<https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/01587919.2019.1681894?journalCode=cdie20>),

Ժամանակակից հասարակության մեջ տեղեկատվական հոսքի ծավալը և վերջինիս անկառավարելի լինելը ստիպում են կատարելագործել վերլուծության և տեղեկատվությունը գիտելիքի վերածելու հայտնի մոդելները: Դա անհնար է առանց տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառման: Ուստի կրթական համակարգի հեռանկարային զարգացման համար տեղեկացված լինելը կարևորագույն խնդիր է: Ընդ որում, առաջնահերթ խնդիր է ոչ թե հաշվողական տեխնիկայի, հեռահաղորդակցման ցանցերի և էլեկտրոնային ուսումնական ձեռնարկների առկայությունը (թեպետ դրանք կարևոր բաղադրիչներ են), այլ կրթական գործընթացի սկզբունքորեն նոր մոդելների մշակումն ու ներդրումը:

Գլուխ 1.2 Հեռավար ուսուցումը և դրա առանձնահատկությունները

Հեռավար ուսուցման եղանակով կազմակերպվող կրթական գործընթացի կողմերը պատասխանատվություն են կրում իրենց իրավասության շրջանակում:

Հեռավար ուսուցումը դասվարի և սովորողի միջև փոխազդեցությունն է հեռավորության առկայության պայմաններում՝ որում ներառվում են ուսումնական գործընթացի բոլոր բաղադրիչները (նպատակները, բովանդակությունը, մեթոդները կազմակերպման ձևը, դասավանդման միջոցները) և իրականացվում է հատուկ ինտերնետային տեխնոլոգիաների միջոցով՝ ապահովելով ինտերակտիվություն:

Հեռավար ուսուցումը սկսեց զարգանալ անհատական համակարգիչների լայն տարածում ստանալուց: Ինտերնետային գլոբալ ցանցի ի հայտ գալուց հետո սկսվեց լայն տարածում գտնել նաև հեռավար կրթությունը:

Առաջին անգամ հեռավար ուսուցման կուրսն օգտագործվել է Իսահակ Պիտմանի կողմից և ստացել է Պիտմանի նորարարություն անվանումը: Նա իր ուսանողներին փոստի միջոցով ուղարկում էր նյութեր և թեստեր, որոնց պատասխաններն ստանում էր կրկին փոստով: Այս համակարգը զարգացավ շնորհիվ 1840 թվականին Անգլիայում գործող փոստային համընդհանուր տարիֆի միջոցով: ԱՄՆ-ում առաջին միջնորդ դպրոցը եղել է Տանը Ուսուցումը Խրախուսող կազմակերպությունը (Society to Encourage Studies at Home), որը հիմնադրվել է 1873 թվականին:

Հեռավար ուսուցումը շատ հաճախ կապում են ուսուցման փակ համակարգի հետ, որի դեպքում տվյալների փոխանցման, շփման և ուսուցման հիմնական միջոցը հանդիսանում է համացանցը:(<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56573>): Web տեխնոլոգիան դառնում է այն միջավայրը, որտեղ հեռավար ուսուցումը սկսում է գործել ավելի արդյունավետ:

Ժամանակակից հեռավար ուսուցման համակարգը տրամադրում է կենտրոնացված ավտոմատացված ուսուցման ղեկավարում.

- Արագ և էֆեկտիվ տեղաբաշխումը և ուսումնական կոնտեքստի տրամադրումը ուսուցանվողներին
- Ժամանակակից նորմերի պահպանումը տեխնիկական հեռավար ուսուցման բնագավառում
- Ուսումնական համակարգի անհատականացում և հնարավորություն բազմակի օգտագործման համար:(<https://elearningindustry.com/trends-in-education-technology-modern-society>):

Հեռավար ուսուցման գործընթացը կազմակերպվում է էլեկտրոնային հարթակի միջոցով: Ֆորումներ, առցանց առաջադրանքներ, վեբինարներ, իրավիճակային խնդիրներ, ինքնաստուգման թեստեր, առցանց սեմինարներ: Այդ ամենը՝ միայն էլեկտրոնային հարթակում: Կրթության այս տեսակի դեպքում ստեղծվում է նոր կրթական տեղեկատվական միջավայր, և սովորողները հստակ գիտակցում են, թե ինչպիսի գիտելիքներ, հմտություններ

և ունակություններ են իրենց անհրաժեշտ: Նրանք հնարավորություն են ունենում ինքնուրույն ստանալու անհրաժեշտ գիտելիքները, օգտվելու զարգացած տեղեկատվական ռեսուրսներից (տվյալների և գիտելիքների բազաներ, համակարգչային, այդ թվում՝ մուլտի-մեդիա, ուսուցանող և ստուգիչ համակարգեր, տեսագրություններ, ձայնագրություններ, էլեկտրոնային գրադարաններ, ինչպես նաև էլեկտրոնային դասագրքեր):

Հեռավար ուսուցման կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ ուսուցման գործընթացի առանցքում ոչ թե դասական իմաստով դասավանդումն է, այլ ինքնուսուցումը, սովորողի ինքնուրույն գործունեությունը՝ գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու նպատակով:

Մասնագետները պնդում են, որ ավանդական կրթությունն այսօր ճգնաժամ է ապրում ողջ աշխարհում: Ավանդական կրթության ոչ մատչելի լինելը, պահպանողականությունը, սահմանափակվածությունը, իներցիոն բնույթը խոչընդոտում են կրթության հետագա զարգացումը: Մինչդեռ ժամանակակից մարդու գիտելիքների պահանջը շարունակ աճում է, և այն բավարարելու համար անհրաժեշտ են նոր մեթոդներ՝ այսօրվա հազեցած տեղեկատվական-կրթական միջավայրում կողմնորոշվելու համար:

Հեռավար ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք հեռավար դասընթացների նախագծման և իրագործման հիմքն են: Ուսուցման այս ձևը հեռանկարային է հատկապես անընդհատ ուսուցման իրականացման առումով:

Գլուխ 1.3 Հեռավար ուսուցման խոչնդոտներ

Եկեք առանձնացնենք մի քանի հիմնական խնդիրներ, որոնց անընդհատ առնչվելու ենք հեռավար ուսուցման ընթացքում:

1. Դպրոցներում համակարգիչների հասանելիության հարցն ի վերջո պետք է լուծվի: Այս կամ այն դպրոցին կամ սովորողին մի քանի հատ համակարգիչ տրամադրելը որեւէ կերպ հարցը չի լուծում: Հայաստանի շատ դպրոցներ ինֆորմատիկայի իրենց դասասենյակներում ունեն ընդամենը մեկ-երկու աշխատող համակարգիչ, և շատ հաճախ աշխատող համակարգիչների կողքին որպես թանգարանային նմուշ շարված են լինում հին ու չգործող համակարգիչներ: Հիմա արդեն անհրաժեշտություն է, որ ինֆորմատիկայի դասասենյակները զինված լինեն աշխատող համակարգիչներով և ունենան համացանցային հասանելիություն: Շատ կարևոր է նաև, որ այդ դասասենյակները լինեն բաց ոչ միայն ուսուցիչների, այլ նաև աշակերտների համար, քանի որ շատերի համար դպրոցը կլինի այն միակ միջավայրը, որտեղ նրանք կարող են առցանց սովորել:

2. Հեռավար ուսուցում անցկացնելիս պետք է հնարավորինս խուսափել դասախոսության ձևաչափից: Միայն դասը կարդալով կամ սահիկաշար ցուցադրելով հնարավոր չէ լիովին գրավել աշակերտների ուշադրությունը: Պետք է հաշվի առնենք, որ աշակերտը համացանցի անձայրածիր դաշտում է՝ հետաքրքրություններով լի, և դասը պետք է բավականաչափ ներգրավող լինի, որ աշակերտը չչեղվի:

3. Ինչ խոսք կարևորորվում է նաև ուսուցիչ-աշակերտ-ծնող սերտ համագործակցությունը, հեռավար ուսուցումն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:

4. Աշակերտի մեջ պետք է փոխվի մտածելակերպը հեռավար ուսուցման նկատմամբ:

5. Դասագրքերի համապատասխանեցումը հեռավար ուսուցմանը

6. Հետաքրքիր մոդելների կիրառումը

Այս բոլոր նշված և չնշված փոփոխությունների առկայության դեպքում կհանգենք մի կետի, որտեղ կունենաք.

1. Ժամանակի խնայողություն

2. միջոցների խնայողություն

3. երկարաժամկետ կրթություն

4. զարգացող տեխնոլոգիական հմտություններ

5. արդյունավետ տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի կիրառում և այլն:

2.1. Հեռավար տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում

Հսկայական տեղեկատվության յուրացումը, վերափոխումը և կիրառումը յուրաքանչյուր երեխային սովորեցնելը տարրական դպրոցում դասավանդելու հիմնական նպատակն է: Կարևոր է երեխաներին սովորեցնել ինքնուրույն փնտրել տեղեկատվություն, մշակել դրանք նորագույն տեխնոլոգիաների միջոցով, օգտագործել իրենց ժամանակը ռացիոնալ, արդյունավետ համագործակցել դասընկերների, ուսուցիչների, ծնողների հետ և այլն: Դասավանդման ավանդական մեթոդների և ցանցային հեռավար ուսուցման տեխնոլոգիաների (ՀՈՒՏ) համադրությունը կօգնի ուսուցչին լուծել այս խնդիրը: ՀՈՒՏ-ի կիրառումը տարրական դպրոցում երեխաների համար ավելի հետաքրքիր և արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը:

Հեռավար կրթությունը աշխատելու շատ հարմար և օգտակար ձև է: Հեռավար կրթության առավելություններն են.

- ազատություն և ճկունություն – սովորողը կարող է ինքնուրույն պլանավորել դասերի ժամանակը, վայրը և տևողությունը,
- շարժունակություն - ուսուցչի և աշակերտի միջև հետադարձ կապի արդյունավետ իրականացումը ուսումնական գործընթացի հաջողության հիմնական պահանջներից և հիմքերից մեկն է,
- ստեղծագործականություն - սովորողի ստեղծագործական ինքնարտահայտման հարմարավետ պայմաններ,
- ուսուցչի ծանրաբեռնվածության թեթևացում - (ավելի քիչ ժամանակ է ծախսվում աշակերտի աշխատանքը ստուգելու և գնահատելու վրա):

Հարկ է նշել, որ հեռավար ուսուցումը հիմնված է բազմամակարդակ ուսուցման մանկավարժական տեխնոլոգիաների, տարբեր կրթական տարածքներում դպրոցականների ինքնակրթության անկախության, ուսուցչի և աշակերտի փոխազդեցության տարբեր ձևերի և մեթոդների համադրության վրա: Հեռավար ուսուցման ձևերի կիրառումը նախատեսված է տարբեր մակարդակների սովորողների հետ աշխատելու համար.

- աշխատանք հաշմանդամություն ունեցող աշակերտների հետ,
- աշակերտների գիտելիքների ուղղում,
- աշխատանք շնորհալի երեխաների հետ:

Ուսուցիչները կազմակերպում են հեռավար փոխազդեցություն ցանցի տարբեր կայքերում, ստեղծում ինտերնետային կայքեր և այլն: Հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում ուսուցումն ավելի արդյունավետ է դարձնում: ՀՈՒՏ-ի կիրառման շնորհիվ կրտսեր դպրոցականները կարող են ուսուցչի ղեկավարությամբ լրացնել և ստուգել առարկայի իրենց գիտելիքները, ուղարկել ստուգման ավարտված տնային առաջադրանքները, անցնել ուսումնական թեստավորում, քննարկել հետաքրքրող թեմաներ, մասնակցել համացանցային տարբեր կրթական նախաձեռնություններին (նախագծեր, մրցույթներ, խաղեր):

Այսպիսով, կրտսեր աշակերտները միշտ ընդգրկվում են ուսումնական գործընթացում, նույնիսկ եթե դասը բաց են թողել, և ծնողները հնարավորություն ունեն ծանոթանալու ուսումնասիրվող նյութին, մասնակցել կարևոր հարցերի քննարկմանը և տեղյակ լինել դպրոցում տեղի ունեցող իրադարձություններին: ՀՈՒՏ-ի կիրառման առավելությունները.

Ամփոփելով նշենք, որ հեռավար և ավանդական առկա կրթության համադրությունը ավելի ու ավելի հեռանկարային է: Հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնական գործընթացում դպրոցականների ընդգրկման արդյունքում նրանք զարգացնում են տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատելու հմտություններ և զարգացնում են գործնական հմտությունների նախադրյալներ իրենց կյանքի ընթացքում: Ներկայումս տեղեկատվական նոր տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ հնարավոր է դառնում կրթություն ստանալ հեռակա կարգով: Հեռավար կրթության տեխնոլոգիաները (ՀԿՏ) այն տեխնոլոգիաներն են, որոնք օգտագործվում են տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների հետ միասին, մասամբ կամ ամբողջությամբ միջնորդավորված փոխազդեցությամբ, այսինքն՝ հեռավորության ընթացքում սովորող և ուսուցիչ փոխազդեցությունը: Նման տեխնոլոգիաների օգտագործումը կրթության գործընթացն ավելի արդյունավետ է դարձնում: դպրոցի պայմաններում սա հատկապես կարևոր է, քանի որ աշակերտները նոր են սկսում տիրապետել դպրոցական կրթությանը: Հեռավար ուսուցման տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ուսանողներին լրացնել իրենց գիտելիքները, քանի որ դասի ընթացքում ուսուցիչը հաճախ չի կարողանում դիտարկել թեմայի վերաբերյալ ամբողջ նյութը: Այս դեպքում հեռավար ուսուցման տեխնոլոգիաները կրտսեր դպրոցականների համար կարճես դառնում են յուրօրինակ օգնականներ, որոնք թույլ են տալիս ստուգել տնային առաջադրանքները, օգտագործել ուսումնական թեստավորումը, քննարկել ֆորումում ընդգրկված նյութը և այլն:

ՀՈՒՏ-ը թույլ է տալիս շատ ավելի հաջող «լրացնել բացերը», եթե սովորողը ինչ-ինչ պատճառներով ստիպված է եղել բաց թողնել դասը: Այս պատճառները ներառում են.

- երեխայի հիվանդություն,
- քրոնիկ հիվանդությունների սրացում,
- հաշմանդամություն՝ կապված սահմանափակ շարժունակության հետ:

Այսօր առողջության պատճառով դպրոց չհաճախող երեխաների թվի ավելացման միտում կա, ուստի այդպիսի երեխաների կրթության անհատականացման խնդիրն ավելի է սրվում: Հեռավար կրթությունը լուծում է այս խնդիրը: Հեռավար ուսուցումը կրթության մի տեսակ է, որը հիմնված է իրարից հեռու գտնվող ուսուցիչների և սովորողների կրթական փոխազդեցության վրա, ինչը իրականացվում է համակարգիչների, հեռահաղորդակցական տեխնոլոգիաների և համացանցային ռեսուրսների օգնությամբ՝ հեռավար: Նման դասընթացը ներառում է ուսումնական գործընթացին բնորոշ վերապատրաստման համակարգի բոլոր բաղադրիչները՝ իմաստը, նպատակները, բովանդակությունը, կազմակերպական ձևերը, վերապատրաստման գործիքները, արդյունքների դիտարկման և

գնահատման համակարգը: Հեռավար ուսուցումը պարզվում է տնտեսապես շահավետ է՝ հաշվի առնելով առկա կրթության ամբողջ համակարգի՝ տրանսպորտային և կազմակերպչական ծախսերը: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանխատեսումների XXI դարում ավագ դպրոցի աշակերտները իրենց ժամանակի միայն 30-40%-ը կանցկացնեն դպրոցում, 40%-ը հատկացված կլինի հեռավար ուսմանը, իսկ մնացած ժամանակը՝ ինքնակրթությանը:

Հարկ է նշել, որ հեռավար ուսուցման միջոցով երեխայի համար բացվում են նոր հնարավորություններ, ընդլայնվում են նրա տեղեկատվական տարածքը և տեղեկատվական ոլորտը, զարգանում են ստեղծագործական և որոնողական աշխատանքները: Ելնելով վերոգրյալից՝ մենք կարող ենք եզրակացնել տարրական դպրոցում հեռավար ուսուցման հեռանկարների մասին: Ժամանակի ընթացքում ինտերակտիվ հաղորդակցման մեթոդների տեսակներն ավելի ու ավելի են շատանում, ուստի մենք կարող ենք վստահորեն ակնկալել բավարար առաջընթաց ուսման այս մեթոդի մեջ: Հարկ է նշել, որ դպրոցում հեռավար ուսուցումը, շնորհիվ իր նորույթի և գործնականում կիրառման անբավարար փորձի, ունի որոշ թերություններ: Այսպիսով, դպրոցում հեռավար ուսուցման հիմնական թերություններից մեկն այն է, որ գիտելիքների նման ձեռքբերումը կիրառելի է ոչ բոլոր երեխաների համար, ինչը ենթադրում է որոշակի պատասխանատվության աստիճան և ինքնախթան: Այս խնդիրը շատ դպրոցականների համար բավականին բարդ և էական խոչընդոտ է հեռավար կրթություն ստանալու համար, և այն կարող է լուծվել միայն ծնողների կողմից խիստ վերահսկողության միջոցով: Հեռավար ուսուցման թերությունը բարձրորակ ինտերակտիվ հաղորդակցման գործիքների՝ համակարգչի, գերարագ ինտերնետի և այլնի անհրաժեշտությունն է, որոնք մատչելի են ոչ բոլոր քաղաքացիների համար: Հեռավար ուսուցման արդյունավետ իրականացման համար սովորողը պետք է ունենա այնպիսի հմտություններ, ինչպիսիք են՝ նպատակադրվածությունը, աշխատանքի ինքնուրույն պլանավորումը, հիմնականը տարբերակելու ունակությունը, արդյունքները գնահատելու և դրանց հետևելու ունակությունը, ինչը անհնարին է թվում կրթության սկզբնական փուլում՝ ավելի փոքր սովորողների տարիքային առանձնահատկությունների պատճառով:

Այս պայմանները ենթադրում են մանկավարժի առկայություն, որը մշտական օգնություն կցուցաբերի երեխային՝ ուսուցանելով նրան կրթական աշխատանքի հիմնական մեթոդները և ուղեկցելով անհատական կրթական ուղով: Սովորեցնողը պարտադիր չէ՝ մանկավարժ լինի. ծնողը նույնպես կարող է հանդես գալ այս դերում:

2.2 Հեռավար և ավանդական ուսուցման ձևերի համեմատական վերլուծություն

Հեռավար ուսուցման տարբերությունն առկա ուսուցումից այն է, որ նյութի էական մասը յուրացվում է ոչ թե դասարանում, այլ համացանցային տեխնոլոգիաների միջոցով, այսինքն՝ հեռավար ուսուցմամբ սովորողների աշխատանքը կազմակերպվում է հիմնականում ինքնուրույն:

Առկա ուսուցման և հեռավար ուսուցման հիմնական տարբերություններն են.

- 1) ուսուցում՝ ըստ բնակավայրի կամ աշխատավայրի,
- 2) ուսումնական գործընթացի ճկուն ժամանակացույց, որը կարող է լինել ամբողջովին ազատ՝ բաց կրթության դեպքում, կամ հիմնականում ազատ՝ կապված սահմանափակ թվով ստուգողական աշխատանքների կատարման հետ (քննությունների հանձնում, օնլայն շփում ուսուցչի հետ, խմբային պարապմունքներ, ինչպես նաև լաբորատոր աշխատանքների կատարում սարքավորումների միջոցով),
- 3) շփում ուսուցչի հետ՝ հիմնականում հեռահաղորդակցության միջոցների օգնությամբ:


Հեռավար ուսուցման և ավանդական ուսուցման տարբերություններից կարելի է առանձնացնել մի շարք տիպիկ հոգեբանական մանկավարժական խնդիրներ, որոնք ստիպված են լուծել ուսուցիչներն ու աշակերտները: Դրանք են.

- 1) դժվարություններ՝ կապված ուսուցման գործընթացի մասնակիցների միջանձնային շփման հետ,
- 2) խնդիրներ՝ կապված արդյունավետ աշխատող փոքր ուսումնական խմբերի ձևավորման հետ՝ համագործակցված ուսուցում իրականացնելու համար,
- 3) խնդիրներ՝ կապված ունկնդիրների կողմից տեղեկատվության ընկալման անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության հետ՝ առավել արդյունավետ ուսումնական գործընթաց կազմակերպելու նպատակով,
- 4) ուսուցչի համապատասխանությունը հեռավար ուսուցման համար ընտրված մեթոդիկային և մանկավարժական տեխնոլոգիաներին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը անգլերենի դասավանդման գործընթացում

Ինչպես գիտենք, տարրական դպրոցում է, որ երեխայի առաջատար գործունեությունը խաղից վերածվում է ուսումնականի: Այսպիսի փոփոխությունը հեշտությամբ չի ընկալվում այն աշակերտների կողմից, որոնց մոտ պակասում են խաղային փորձը: Համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը ուսումնական գործընթացում պարզապես թույլ է տալիս համատեղել խաղային և կրթական գործողությունները: Սա ապահովում է գործունեության սահուն փոփոխություն, և ուսումը դառնում է ոչ ֆորմալ և հետաքրքիր: Էլեկտրոնային ուսուցողական նյութերի համակարգված օգտագործումը ոչ միայն նպաստում է տարրական դասարանների աշակերտների տեղեկատվական կարողությունների զարգացմանը, այլ նաև թույլ է տալիս լուծել մի շարք հոգեբանական և մանկավարժական խնդիրներ: Տարրական դպրոցում անհնար է դաս անցկացնել առանց դիդակտիկայի: Նախկինում դրանք տարբեր պաստառներ էին, նկարներ, նկարազարդումներ և այլն: Ներկայումս դիդակտիկական ապահովում է համակարգիչը: Համակարգչի հարուստ գրաֆիկական, ձայնային, ինտերակտիվ հնարավորությունների օգտագործումը դասարանում բարենպաստ ֆոն է ստեղծում՝ նպաստելով աշակերտների զարգացմանը, կարծես աննկատելի և խաղային մեթոդով: Կարծում եմ, որ դպրոցականների ուսուցման և դաստիարակության արդյունքներից մեկը պետք է լինի երեխաների պատրաստակամությունը տիրապետելու ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներին և հետագա ինքնակրթության համար համակարգչի միջոցով ստացված տեղեկատվությունը արդյունահանելու և մշակելու ունակությանը: Տարրական դպրոցում, մասնավորապես անգլերենի դասավանդման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունը, հաճախականությունը, արդյունավետությունը պարզելու նպատակով մեր թեմայի շրջանակներում իրականացրեցի հարցազրույց դպրոցի ուսուցիչների շրջանում:


1. Անգլերենի դասավանդման գործընթացում կիրառվում է տեղեկատվական տեխնոլոգիաներ:



Առաջին հարցի միջոցով պետք է փորձել պարզել, թե արդյոք անգլերենի դասերն անցկացվում են տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով: Արդյունքներից պարզ դարձավ, որ ուսուցիչների 55% անգլերենի դասերն անցկացնում է տեղեկատվական

տեխնոլոգիաների կիրառման միջոցով: Իսկ 45%-ը՝ ոչ:

2.Ինչպիսի՞ տեղեկատվական տեխնոլոգիաներ է կիրառվում:



Այն հարցին, թե ինչպիսի՞ տեղեկատվական տեխնոլոգիաներ է կիրառվում անգլերենի դասի ընթացքում, ուսուցիչների 33%-ը նշել է Power point ծրագիր, 25%-ը՝ էլեկտրոնային գրքեր, 15 %-ը՝ տեսաֆիլմեր և սմարթ գրատախտակ, 10%-ը՝ e-school, իսկ 2%-ը՝ Learnpro ծրագիրը:


Ուշադրության կենտրոնում էր նաև այն հարցը, թե ուսուցիչները անգլերենի դասավանդման գործընթացի ո՞ր փուլում են կիրառում տեղեկատվական տեխնոլոգիաները:

Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցվողների 19%-ը կիրառում է դասի խթանման փուլում, 15%-ը՝ իմաստավորման, 65%-ը՝ կշռադատման փուլում և միայն 1%-է կիրառում ամբողջ դասի ընթացքում:


Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրեր, ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 3, 4):

Ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը աշակերտների մոտ բարձրացնում է մտապահելու ունակությունը: Այս գործիքները ուսուցումը դարձնում են ավելի հետաքրքիր և արդյունավետ: Quizizz, Forms.google գործիքները հնարավորություն են տալիս վարժություններ ստեղծելիս տարբեր ձևաչափով հարցադրումներ կազմել, խառնել հարցերի հաջորդականությունը: Թույլ են տալիս առցանց հետևել սովորողների առաջադիմությանը, հղմամբ տարածել պատրաստի վարժություններ, յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ: (Ս.Խաչատրյան, «Ուսուցման արդյունավետ հնարներ էջ 42»):

3. Դասավանդման գործընթացի ո՞ր փուլում է հիմնականում կիրառվում տեղեկատվական տեխնոլոգիաները:




4.Նշված էլեկտրոնային ուսուցողական ծրագրերից որո՞նք են կիրառվում անգլերենի դասի ընթացքում :



Այս հետազոտությունը կրերի այն եզրակացության, որ հարցման մասնակիցների կեսից ավելին անգլերենի դասերի ընթացքում կիրառում է տեղեկատվական տեխնոլոգիաներ և հիմնականում կշռադաստման փուլում: Կիրառվում են Power Point ծրագիրը, էլեկտրոնային գրքեր, սմարթ գրատախտակ և այլն: Հարցման մասնակիցների մեծ մասը կարծում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը զգալիորեն հեշտացնում է անգլերենի դասերի նախապատրաստումը:

«Ի՞նչ դժվարություններ են ունեցել առցանց ուսուցմանը նախապատրաստվելիս» հարցի արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ 37%-ը հոգեբանորեն պատրաստ չի եղել, 13 %-ը չի ունեցել համապատասխան պայմաններ, 8%-ը չի տիրապետել տեղեկատվական տեխնոլոգիաներին, իսկ մյուս մասը դժվարություններ չի ունեցել:

5. Ի՞նչ ծրագրով են իրականացնում առցանց դասընթացը:



Այն հարցին, թե նրանք ի՞նչ ծրագրով են իրականացրել հեռավար ուսուցումը, արդյունքերից պարզ դարձավ՝ ուսուցիչների 47%-ը հեռավար ուսուցումն անց է կացրել "Zoom" ծրագրով, 38%-ը՝ "Viber" ծրագրով, 10%-ը՝ "dasaran.am"- ի միջոցով, իսկ 5%-ը՝ "Skype" ծրագրի միջոցով: Այսպիսով, ուսուցիչների շրջանում իրականացված հարցման արդյունքներն ամփոփելով՝ եզրակացրեցի, որ ոչ բոլորն էին պատրաստ անցում կատարել հեռավար ուսուցման համակարգին: Հեռավար ուսուցմանը մասնակցում է երեխաների զգալի մասը, բայց այնուամենայնիվ կան աշակերտներ, ովքեր չեն մասնակցում, այսինքն՝ խախտվում է երեխայի կրթություն ստանալու իրավունքը: Ըստ հարցմանը մասնակցած ուսուցիչների՝ հեռավար ուսուցմանը չմասնակցելու հիմնական պատճառներից են՝ համապատասխան տեխնոլոգիաների բացակայությունը, ընտանիքում մեկից ավելի երեխա ունենալու փաստը, ընտանիքում ինտերնետային կապի խնդիրները, երեխայի առողջական վիճակի հետ կապված խնդիրները: Եզրակացնելով և ամփոփելով կարող եմ ասել, որ հեռավար ուսուցումը զարգացնում է երեխաների մեղիագրագիտության մակարդակը, բացահայտում երեխաների ուժեղ և թույլ կողմերը: Հեռավար ուսուցման բացասական կողմերից են՝ վնասում է երեխայի առողջությունը, բացակայում է միմյանց հետ շփումը, ընտանիքում մեկից ավելի երեխաների առկայությունը, ընտանիքում ֆիզիկական պայմանների բացակայությունը, երեխաների շրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների բացակայությունը, երեխաների ծանրաբեռնվածության աստիճանի բարձացումը, երեխայի առաջադիմության կորուստը, աշակերտների գիտելիքների ոչ լիարժեք գնահատումը:

ESL LESSON PLAN TEMPLATE

OVERVIEW		
LessonTitle Why To Know Foreign Languages		UnitTitle: Focus on Speaking
Lesson Unit 1	ESL/ level A2	ClassLevel: 9th
Length of Lesson in # of Hours: 45min. in unit: Unit 1 A	# of Classes	Teacher(s): Ani Stepanyan
STAGE 1 – PLANNING FOR DESIRED RESULTS		
LESSON OBJECTIVES: CONTENT AND LANGUAGE		
<p><i>By the end of this lesson, students will be able to:</i></p> <ul style="list-style-type: none"> <i>.Learn new words and expressions</i> <i>.Read the text and discuss</i> <i>.Answer the questions</i> <i>.Do ex.es from the textbook</i> 		
STANDARDS AND BENCHMARKS THAT SUPPORT AND ALIGN WITH THE LESSON OBJECTIVES	KEY INSTRUCTIONAL SHIFTS	
<p>Be able to analyze the lesson , orally present it to the audience</p> <p>Expressing an opinion by justifying and explaining its approaches, giving agreement and disagreement.</p>	<p><i>Indicate those addressed in this lesson:</i></p> <ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> Practice with complex text and academic language <input type="checkbox"/> Ground reading, writing, and speaking in evidence from literary and 	
ESSENTIAL QUESTION(S) <i>(optional)</i>		
<p>What do I want my students to do at the end of this class that they couldn't do before?</p>		

	informational texts <input type="checkbox"/> Build knowledge through content-rich nonfiction
--	---

PRIOR KNOWLEDGE NEEDED

What do I already know about this?

STAGE 2 -- EVIDENCE OF LEARNING

*Ways that students and I will know the extent to which objectives have been met:
 Discussion , ICT tool.*

STAGE 3 --LEARNING PLAN		MATERIALS	TIME (optional)
INTRODUCTION <i>GuidingQuestions</i> <ul style="list-style-type: none"> ▪ <i>How will students know the purpose for this lesson?</i> ▪ <i>How will I contextualize the language focus of the lesson?</i> 	Stimulate the students so they could speak about the topic. Communicative method Collaborative learning		5 min

STAGE 3 --LEARNING PLAN	MATERIALS	TIME (optional)
<p>BODY OF THE LESSON</p> <p><i>Guiding Questions</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ <i>What opportunities will students have to practice new language and use it in authentic communicative activities?</i> ▪ <i>What questions will I pose to engage students, foster thinking and reasoning, and elicit language production?</i> ▪ <i>What academic and content vocabulary will students learn?</i> ▪ <i>How will I monitor the student learning and acquisition of language targets of the lesson?</i> ▪ <i>What opportunities will students need for scaffolding and differentiation?</i> 	<p>Greetings.</p> <p>Checking of attendance</p> <p>Checking homeworks</p> <p>Introducing the topic by asking related questions</p> <p>.What are your expactations about learning another language?</p> <p>.Why do you like to study English?</p> <p>.Why is it important to learn foreign Language?</p> <p>Explain the students that the most obvious benefit of learning a foreign language is the ability to communicate with people from different countries.</p> <p>Use the ICT tool to demonstrate why it is important to learn English.</p>	<p>25 min.</p>

STAGE 3 --LEARNING PLAN	MATERIALS	TIME <i>(optional)</i>
<p>CLOSING <i>Guiding Questions</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ <i>How will I bring closure to the lesson and provide opportunities for student reflection (i.e., transfer of knowledge/skills)?</i> 	<p>Summarize what has been learnt . Tell them what they will learn next , give homework and evaluate them.</p>	<p>10 min.</p>
<p>TEACHER REFLECTION</p> <ul style="list-style-type: none"> ▪ <i>What changes or adaptations would I make after teaching the lesson?</i> 	<p>How will I teach it? How will I know if the students understand? What was hard? Be sure if the lesson worked well.</p>	<p>5 min.</p>

A Few Reasons Why Should Learn A Foreign Language

- English is an International Language.
- Provides opportunities to study abroad.
- To make new friends from different countries and understand different culture better and get the other point of view oon your own culture.

- To improve your professional skills and discover new career opportunities.
- The more languages you know , the better you can analyze your native one
- Opens up a world of job opportunities.
- Armenia is a small country but it is historical , where we can develop English through tourism.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ ուսումնասիրության արդյունքների ամփոփումից կատարեցի հետևյալ եզրակացություններին.

1. Տեխնոլոգիաները խնայում են անձնական ժամանակը, հնարավորություն են տալիս առանց տետր ու կարմիր գրիչի գնահատել գրավոր աշխատանքները:

2. Աշակերտներն ավելի շատ տեղեկություն են ստանում, օգնում են բարձրացնել առարկայի նկատմամբ ճանաչողական հետաքրքրություն:

3. Հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը անգլերենի դասագործընթացում, տարբեր հանգամանքներով պայմանավորված, գտնվում է միջին մակարդակում:

4. ՏՀՏ-ները անգլերենի ուսուցման գործընթացը դարձնում են ավելի հետաքրքիր, բովանդակալից՝ ներկայացնելով անհրաժեշտ տեղեկատվությունը անհրաժեշտ ժամանակին:

5. Մշակված էլեկտրոնային առաջադրանքների կիրառումը դասագործընթացի ժամանակ նպաստեց աշակերտների ուշադրության, դասերի հանդեպ հետաքրքրության մեծացմանը, և փորձը ցույց տվեց, որ երեխաներն ուսումնական նյութը առավել հեշտությամբ յուրացնում են մշակված խաղ-վարժությունները կատարելուց հետո:

6. Տեխնոլոգիաներն իրենց առաջնահերթ տեղն են ունեցել հեռավար ուսուցման ժամանակ դասը դարձնելով ավելի արդյունավետ և հետաքրքիր:

Անգլերենի դասավանդման ընթացքում ՏՀՏ-ի կիրառումն նույնպես պահանջված է, ինչը մեծապես կարող է նպաստել սովորողների առաջադիմությանն ու լեզվական կարողունակության զարգացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յուրաքանչյուր դասասենյակ ապահովել ժամանակակից այնպիսի սարքավորումներով, որոնց միջոցով ուսուցիչը կարողանա անգլերենի դասը մատուցել երեխաներին առավել մատչելի և հետաքրքիր եղանակներով:

2. Ֆինանսավորում հատկացնել ուսուցիչներին՝ վերապատրաստվելու տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ:

3. Ուսուցիչներին ցուցաբերվող մասնագիտական աջակցությունն առավել օգտակար և թիրախային դարձնելու նպատակով բոլոր ուսուցիչների համար չիրականացնել միանման դասընթացներ: Իրականացնել ուսուցիչների մասնագիտական զարգացման թեմատիկ դասընթացներ՝ հիմնվելով նրանց կարիզների և մասնագիտական պատրաստվածության վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թոփուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Զ.Հ., Պողոսյան Լ.Մ, Ասատրյան Ս.Մ., Անտոնյան Լ.Ա., Ղազարյան Մ.Զ., Տեղեկատվական տեխնոլոգիաները դպրոցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2018:
2. Ստեփանյան Ռ., Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական գործիքներ, «Մարի» հրատ., Երևան, 2019:
3. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, «Ասողիկ» հրատ., Երևան, 2004:
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենսգիրք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=160462>
5. Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար <https://old-lib.armedu.am/resource/27157>